կերտի. զոր զՇապուհ եւ սպանին ՚ի նոյն աւուր։

Խոսրով՝ դարձեալ ամ մի՛ խնդրուածովք սրբոյն Սահակայ Հայրապետի։

Արտաշէս՝ որդի Վռամշապհոյ՝ եկաց ամս Զ։ Զսա (վասն) բղջախոհութեան իւրոյ ատեցին իշխանքն Հայոց և մատնեցին երկրորդ Վռամայ Պարսից արքային, և մնաց անիշխան երկիրս Հայոց՝ ամս Գ։ Եւ զԹոռն սրբոյն Սահակայ զՎարդան եդին Սպարապետ ՚ի վերայ աշխարհիս Հայոց՝ ամս ԺԵ։ Եւ բարձաւ թագաւորութիւնն ՚ի ցեղէ Արշակունեաց. որք թագաւորեցին ամս ՆՃԹ. և եղեն այնուհետև ընդ բռամբ Պարսից հրապաշտից։ Եւ երբեմն Հայք Մարզպանք իշխեցին, որք են Վարդ, Մանդոս և Արշամ։